ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

03.08.2021

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2021 թվականի ապրիլի 30-ի (շարունակված 2021 թվականի հունիսի 14-ին) տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2021-1-3 Լ որոշմամբ որոշել է՝

1. 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել:

2. «Արդշինբանկ» ՓԲԸ 2020 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 10,178,412,000 (տասը միլիարդ հարյուր յոթանասունութ միլիոն չորս հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 508,920,600 (հինգ հարյուր ութ միլիոն ինը հարյուր քսան հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 10,178,412,000 (տասը միլիարդ հարյուր յոթանասունութ միլիոն չորս հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,

2) 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարել՝ հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 91.3. կետի 1-ին ենթակետի,

3) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

3. Սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տարեկան շահութաբաժինները վճարել «ՄԲՑ» ՓԲԸ-ին մինչև 2021 թվականի հունիսի 21-ը ներառյալ՝ համապատասխան գումարը վերջինիս բանկային հաշվին փոխանցելու միջոցով: